ԿԱՐԳ

«1102. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՄԲ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՍՏԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) «1124. Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի» «1102. Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» միջոցառմամբ 2022 թվականին դրամաշնորհ ստացող ֆիզիկական անձանց ցանկի ձևավորման համար մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) անցկացման կարգը և պայմանները:

II ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐԸ

2. Դրամաշնորհ տրվելու է հետևյալ մրցութային ուղղություններին համապատասխանող աշխատանքներին.

ա) գեղարվեստական գրականության բոլոր ժանրերին,
բ) գրական և մշակութային հետազոտություններին,
գ) համաշխարհային գրականության նշանակալի՝ մինչև 19-րդ դարի ավարտը ստեղծված երկերի թարգմանություններին:

III ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

3. Մրցույթն իրականացվում է հետևյալ ժամանակացույցով.

Մրցույթի մեկնարկ	2021 թ. հունիսի 20
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	2021 թ. հուլիսի 20
Մրցույթի արդյունքների հայտարարում	2021 թ. դեկտեմբերի 15

IV ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՆ

4. Ծրագրով առավելագույնը մեկ միլիոն դրամ է տրվում մեկամյա ստեղծագործական, թարգմանական կամ հետազոտական աշխատանքի համար:

5. Պայմանավորված նախագծով, ակնկալվող գումարի ու աշխատանքի հարաբերությամբ և այլ հանգամանքներով՝ աշխատանքները կարող են ֆինանսավորվել մասնակի կամ ամբողջապես:
6. Ֆինանսավորման չափը որոշում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից գրահրատարակչության ոլորտի նախաձեռնությունները քննող մասնագիտական խարհուրդը:

V ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Դրամաշնորհային ծրագրին կարող են անհատապես դիմել գրողները, հետազոտողները, թարգմանիչները (ֆիզիկական անձինք), որոնք ՀՀ քաղաքացի են: Չեն դիտարկվի ծրագրով աջակցություն ստանալու համար ներկայացված հայտերը քննող խորհրդի անդամների կամ նրանց մերձավոր հարազատների (ծնող, զավակ, ամուսին) դիմումները:
8. Հայտի փաթեթը (բոլոր նյութերը «PDF» ձևաչափով, իսկ ամբողջը՝ «rar» կամ «zip» փաթեթով) պետք է ուղարկել «literature@escs.am» էլեկտրոնային հասցեին՝ «Թեմա» տողում նշելով Ձեր անունը և ազգանունը:

9. Հայտի փաթեթը պետք է պարունակի՝

◆ հայտի ձևաթուղթը (**կցվում է**),
◆ նախատեսվող ուսումնասիրության թեմայով հոդված (հետազոտական աշխատանքների պարագայում),
◆ նախատեսվող ուսումնասիրության գրականության ցանկ (հետազոտական աշխատանքների պարագայում),
◆ նախատեսվող գեղարվեստական ստեղծագործության հատված (նվազագույնը՝ 10 էջ),
◆ նախատեսվող թարգմանության հատված (նվազագույնը՝ 10 էջ), ինչպես նաև բնագրի համապատասխան հատվածը,
◆ երաշխավորագիր որևէ հրատարակչությունից, ըստ որի, վերջինները պարտավորվում են դրամաշնորհ ստացած հետազոտական, թարգմանական կամ ստեղծագործական աշխատանքը հրատարակել մինչև 2023 թվականի նոյեմբերի 1-ը:
◆ հայտատուի ինքնակենսագրությունը,
◆ անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

10. Թերի կամ կեղծ տվյալներ պարունակող, պահանջվող ուղղություններին չհամապատասխանող, նախկինում հրապարակված աշխատությունների համար ներկայացված հայտերը չեն դիտարկվի:

11. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և մասնագիտական խորհուրդը հարկ եղած դեպքում կարող են դիմումատուից պահանջել հավելյալ փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև հրավիրել հանդիպման:

VI ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

12. Մրցույթի հայտերը պետք է ներկայացնել էլեկտրոնային կարգով:
13. Նույն ֆիզիկական անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի հայտ:
14. Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի ավարտն իրավունք ունի չեղարկելու իր հայտը:
15. Հայտի ստացման պարագայում «literature@escs.am» էլ. փոստից հայտատուն պետք է ստանա հաստատող նամակ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը:
16. Հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրահրատարակչության ոլորտի նախաձեռնությունները քննող մասնագիտական խորհրդի քարտուղարը հայտերը ուղարկում է գնահատման:
17. Հանձնաժողովի անդամները հայտերի ստացումից հետո երկու ամսվա ընթացքում, ըստ չափանիշների, գնահատում են մրցույթի հայտերը և հանձնաժողովի քարտուղարին են փոխանցում գնահատման թերթիկները:
18. Մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի եզրափակիչ նիստում՝ հանձնաժողովի անդամների գնահատման թերթիկների հիման վրա:
19. Հանձնաժողովն ընդունում է որոշում այն ֆիզիկական անձանց ցանկը հաստատելու մասին, որոնք կարող են «1102. Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» միջոցառմամբ 2022 թվականին ստանալ դրամաշնորհ, եթե ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ 2022 թվականի բյուջետային հայտը հաստատեն ՀՀ կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը, և այն ներառվի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:
20. Վերջնական դրական գնահատականի արժանացած է համարվում այն մասնակիցը, որի ստացած միավորը միջինացված հանրագումարում 35-ից բարձր է* (Առավելագույն միավորը 50-ն է):
21. Հանձնաժողովի ամփոփիչ նիստի արձանագրությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչությունը ներկայացնում է նախարարության ֆինանսաբյուջետային վարչությանը:
22. Հայտերի վերջնական ընտրությունը հաստատում է ՀՀ ԿԳՄՍ նախարարը (պետական մարմնի ղեկավարը):

23. Պետական մարմնի ղեկավարը մասնագիտական խորհրդի որոշումը ստանալու պահից տասը աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ մերժում է այն:

24. Ներկայացված հայտերի՝ մասնագիտական խորհրդի և Պետական մարմնի ղեկավարի կողմից հաստատման կամ մերժման փաստի վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը պարտավորվում է տեղեկատվություն տրամադրել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15-ը:

- **Ուշադրություն: Դրամաշնորհային ծրագրի բյուջեն սահմանափակ է: Հետևաբար, եթե դրական գնահատական ստացած հայտատուներին ֆինանսավորելու համար անհրաժեշտ գումարային ֆոնդը գերազանցի 2022 թվականի բյուջեով նախատեսվածին, առաջնահերթություն կտրվի բարձր միավոր ստացած դիմումատուներին՝ նվազման կարգով:**